

Ո Ր Ա Կ Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ու թ Յ Ու Ն

«Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) գործունեության հիմնական նպատակը նոր կառուցվող տարանցիկ գազամուղների և գազի ստորգետնյա պահեստարանների նախագծման, կառուցման, շահագործման և գործող գազամատակարարման և բաշխման ցանցերի շահագործման և ընդլայնման միջոցով բնական գազի հուսալի, անխափան և անվտանգ մատակարարման ապահովումն է:

Որակի քաղաքականության (այսուհետ՝ Քաղաքականություն) հիմքը կողմնորոշումն է մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ՝ ելնելով յուրաքանչյուր բաժանորդի (սպառող) պահանջմունքներից ու սպասելիքներից:

Մատուցվող ծառայությունների որակը և որակի կառավարման համակարգի գործընթացները Ընկերության համար Հայաստանի Հանրապետության ներքին շուկայում բնական գազի իրացման շուկայի ընդլայնման գլխավոր պայմանն է, նաև՝ շահույթ ստանալու, Ընկերության տնտեսական վիճակի կայունացման և Ընկերության զարգացման հիմքը՝ ի շահ սպառողների, Ընկերության անձնակազմի, բաժնետերերի և հասարակության:

Ո Ր Ա Կ Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ու թ Յ Ա Ն Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Ն Պ Ա Ս Ա Կ Ն Ե Ր Ը

-ՀՍ ՀՍՕ 9001:2015 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան որակի կառավարման համակարգերի գործառնությունների կատարելագործված ու արդյունավետ իրականացում,

-Ընկերության գործունեության գործարար ոլորտներում որակի կառավարման համակարգի պահանջների կիրառում և ապահովում,

-բաժանորդներին (սպառողներին) իրավական ակտերի դրույթներին համապատասխան ծառայությունների մատուցման որակի բարձրացում,

-Ընկերության նպատակների հետ առնչվող ռիսկերի նվազագույնի հասցնելը՝ վիճակագրության տվյալների (արդյունքների) հիման վրա միջոցառումների մշակմամբ և իրականացմամբ,

-սպառողների շրջանում բարձր վարկանիշի նվաճում և պահպանում:

Ն Ե Վ Ա Ս Ն Պ Ա Ս Ա Կ Ն Ե Ր Ի Ն Հ Ա Մ Ն Ե Լ Ո Ւ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

-Որակի կառավարման համակարգի կատարելագործում, արդյունավետ գործառնության ապահովում,

-Որակի քաղաքականության մասին Ընկերության բոլոր աշխատողների իրազեկում՝ նպատակ ունենալով նրանց ներգրավվածությունը որակի կառավարման գործընթացին,

-Ընկերության աշխատողների համար բարենպաստ աշխատանքային միջավայրի ստեղծում, խրախուսում և որակավորման անընդհատ բարձրացում, անձնակազմի ուսուցում,

-արտադրության և տեխնոլոգիական միջոցների արդիականացում, կատարելագործում,

-վիճակագրության ներդրում,

-պայմանների փոխշահավետ հարաբերությունների որակի բարձրացում (Ընկերության կողմից կնքվող պայմանագրերի վերանայում ռիսկերի գնահատմամբ):

Ընկերությունը ստանձնում է որակի կառավարման համակարգի քաղաքականության և նպատակների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների տրամադրման և, ելնելով իր մշակված Քաղաքականության դրույթներից, Ընկերության աշխատողներին, շահագրգիռ կողմերին սույն Քաղաքականության ծանոթացման, ինչպես նաև՝ որակի կառավարման համակարգերի ապահովման և բարելավման նպատակով աշխատանքների կատարելագործված, արդյունավետ կազմակերպման ու կառավարման պարտավորություն:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Որակի քաղաքականությունը տարածվում է Ընկերության ստորաբաժանումների, մասնաճյուղերի ու հիմնարկների վրա: